«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները տարրական (հիմնական և ավագ) դպրոցում

Առարկան՝ Կերպարվեստ
Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Բաղդասարյան

Ուսումնական հաստատություն՝ Շղարշիկի Ա.Մինասյանի անվան միջն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն---------- **3**

Ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները տարրական (հիմնական և ավագ) դպրոցում---------- 4

Եզրակացություն---------- **14**
Օգտագործված գրականության ցանկ---------- **15**

Ներածություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս առումով ուսուցման նոր մեթոդների և կազմակերպման ձևերի իմացությունը շատ կարևոր է: Առաջարկում եմ քննարկենք տարբերակված և անհատական ուսուցման կազմակերպման ձևերը, որոնց շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ ուսումնական նյութը կարող է յուրացնել համապատասխան իր ընդունակությունների և ուսումնական հնարավորությունների:

Թեմայի նորույթը: Այսօր օրվա պահանջն է յուրաքանչյուր աշակերտի մեջ տեսնել անհատականություն և բնականաբար օրվա հրամայականն է նաև անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրին:Իսկ ինչ մեթոդներ ու հնարներ կարելի է կիրառել նպատակին հասնելու համար՝սիրով կամսնակցեմ քննարկումներին:

Թեմայի նպատակը: Ուսումնասիրել ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները տարրական (հիմնական և ավագ) դպրոցում:

Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել երեխայի ստեղծագործական հնարավորությունները, հոգեբանական առանձնահատկությունները, մտավոր կարողությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, անհատականությունը: Տարբերակված մոտեցումը, բնականաբար, փոխում է նաև ուցուցչի գործառույթները: Ուսուցչի գլխավոր խնդիր է դառնում սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը:

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում:

Ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները տարրական (հիմնական և ավագ) դպրոցում

Սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը ենթադրում է.

1. հաղորդակցություն ժողովրդավարական, հարգալից ոճ,
2. բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային, անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը,
3. աջակցող, խրախուսող, բայրացկամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով,
4. գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում։[1]

Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել երեխայի ստեղծագործական հնարավորությունները, հոգեբանական առանձնահատկությունները, մտավոր կարողությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, անհատականությունը։ Տարբերակված մոտեցումը, բնականաբար, փոխում է նաև ուցուցչի գործառույթները։ Ուսուցչի գլխավոր խնդիր է դառնում սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը ենթադրում է.

1. հաղորդակցություն ժողովրդավարական, հարգալից ոճ,
2. բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային, անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը,

[1] Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 2004

3. աջակցող, խրախուսող, բայրացկամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով,
4. գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում։[2]

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում։

Մանուկ Մկրտչյանի «Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը» մենագրության մեջ ձևակերպված են ուսուցման կանխադրույթները.

Առաջին՝ յուրաքանչյուր առողջ երեխա ի վիճակի է յուրացնել ցանկացած ուսումնական նյութ։

Երկրորդ՝ երեխաները միմյանցից տարբերվում են ոչ թե այս կամ այն նյութը յուրացնելու իրենց հնարավորություններով, այլ այդ նյութը յուրացնելու իրենց անհատական ձևով ու միջոցներով։

Երրորդ՝ աշակերտի հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ որոշվում է ոչ թե այդ նյութի բովանդակությամբ, այլ այդ նյութի յուրացման գործընթացում աշակերտի գործողությունների հաջորդականությամբ։

Ըստ վերը նշված կանխադրույթների երեխաների զարգացման հոգեֆիզիոլոգիական տարբերությունները թելադրում են ուսուցման տարբերակման անհրաժեշտություն։ [3]

Նույն դասարանում սովորում են տարբեր մակարդակի աշակերտներ, նրանք տարբերվում են իրենց նախնական գիտելիքներով, իմացական կարողություններով, բնավորությամբ՝ տարբեր բնավորության աշակերտների մոտ տարբեր են սովորելու ոճը, մղումը, վերաբերմունքը, ուղեղի կիսագնդերի դոմինանտությունը։ Նշված

[2] Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 3-е изд., испр. и доп. - М.: Изд-во УРАО, 2000

[3] Մ. Մկրտչյան «Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը» մենագրություն

տարբերություններն անխուսափելի են դարձնում դասավանդման մեթոդաբանության մեջ նոր մոտեցումների կիրառումը: Այս առումով անհրաժեշտ է, որ ուսուցիչը գտնի հետևյալ հարցերի հարցերի պատասխանները.

1. ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ դասավանդել
2. ինչպե՞ս կարող եմ աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ ավելի դրական դարձնել:

Արդյունավետության տեսակետից, որոշիչը ոչ թե այն է, թե ինչ է ուսումնասիրվում, այլ այն, թե ինչպես է ուսումնասիրվում: Ուսուցիչը կգտնի վերոնշյալ հարցերի պատասխանները, եթե իրականացնի տարբերակված ուսուցում:

Գիտնականների մի զգալի մասն անահատական մոտեցման սկզբունքին անդրադարել է դաստիարակչական աշխատանքներում, մանկավարժության վերաբերյալ ուսումնական ձեռնարկներում կամ մենագրություններում (Վ. Ի. Դանիլով, Մ. Ա. Եսիպով, Պ. Ի. Շիմբիրև, Ի. Պ. Օգորոդնիկով և ուրիշներ):

Հեղինակների երկրորդ խումբը իև առջև խնդիր չի դրել մանրամասն հետազոտելու անհատական մոտեցման ուղիներն ու եղանակները դպրոցում, բայց այս կամ այն ձևով բացահայտել է առաջավոր դպրոցների փորձը՝ կապված այս սկզբունքի կենսագործման հետ (Ե. Պ. Երես, Վ. Ա. Կրուտեցկի, Ն. Ս. Լուկին, Լ. Ս. Սլավինա, Ն. Ի. Բոլդիրև, Զ. Ի. Ռասկին, Վ. Է. Գմուրման և ուրիշներ):

Երրորդ խումբը անհատական մոտեցման սկզբունքին նվիրել է առանձին ամսագրային հոդվածներ և հաղորդումներ (Բ. Բ. Կոմարովսկի, Լ. Բ. Իտելսոն, Ա. Բ. Զասիմովսկի, Ա. Պ. Կրակովսկի, Ա. Մ. Նետիլկո և ուրիշներ):

Եվ վերջապես՝ հետազոտողների չորրորդ խումբը հատուկ զբաղվել է անհատական մոտեցման սկզբունքի ուսումնասիրությամբ (Գ. Գ. Պոպիաձեի, Ա. Մ. Կոլեսովոյի, Մ. Լ. Մուսյալիկի, Դ. Մ. Սոնինի, Է. Ա. Ժիժինայի, Վ. Է. Գուրինի և ուրիշների հետազոտությունները):

Նշված հեղինակներից մեզ համար առանձնապես կարևոր նշանակություն ունի Լ. Ս. Սլավինայի՝ «Անհատական մոտեցումը ցածր առաջադիմություն ունեցող և

անկարգապահ աշակերտների նկատմամաբ» աշխատանքը: Վերջինս գրել է առաջավոր ուսուցիչների փորձի ընդհանրացման և անցկացված գիտափորձերի վերլուծության հիման վրա և պրակտիկ մեծ նշանակություն ունի:

Մեր կարծիքով ուսուցիչների առօրյա աշխատանքում առանձնապես կարևոր դեր են խաղում հեղինակի կողմից արված եզրակացությունները: Սակայն Լ. Ս. Սլավինան չի շոշափում անհատական մոտեցման հարցը ակտիվ սովորողների նկատմամաբ:

Մանկավարժական դասագրքերում անհատական մոտեցման սկզբունքին տրված է շատ աննշան տեղ, իսկ մի շարք դասագրքերում և բրոշյուրներում այս սկզբունքը դիտվում է այն բաժնում, որտեղ շարադրված են սովորողների տարիքային առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, Բ. Պ. Եսիպովի և Ն. Կ. Գոնչարովի «Մանկավարժություն» դասագրքում այս հարցը քննարկվում է հատուկ բաժնում՝ «Երեխաների տարիքային առանձնահատկությունները և անհատական տարբերությունները»:[4]

Ուշագրավ է նաև Վ. Է. Գուրինի «Ավագ դպրոցական հասակ ունեցող սովորողների նկատմամբ անհատական մոտեցման կիրառումը դաստիարակչական աշխատանքում» հետազոտությունը: Այս աշխատանքում ուշադրության են արժանի սովորողների դասակարգումն ըստ ավագ դպրոցական հասակի առաջատար գործունեության դասարանական կոլեկտիվում, անհատական մոտեցումը ստեղծագործական և աշխատանքային ուսուցման պրոցեսում, անհատական մանկավարժական ներգործությունը աշակերտի վրա դպրոցական հասարակական կազմակերպությունների միջոցով:

Անհատական մոտեցման պրոբլեմը քննարկվել է նաև Վ. Գուրինի, Ե. Ա. Ժիժինայի, Ա. Պ. Կրակովսկու, Լ. Լ. Բուսյալիկի, Դ. Մ. Սոնինի, Լ. Կ. Տոկմակովի թեկնածուական դիսերտացիաներում: Հեղինակները բացահայտում են անհատական մոտեցման տարբեր կողմերը միջնակարգ դպրոցի պայմաններում:

[4] Михайличенко О.В. Методика преподавания общественных дисциплин в высшей школе: учебное пособие. – Сумы: СумДПУ, 2009

Հետազոտողները միաձայն այն միտքն են արտահայտում, որ անահատկան մոտեցումը սովորողների նկատմամբ դաստիարակության կարևոր և հրատապ նշանակություն ունեցող սկզբունք է և բոլորն իրենց համոզմունքն են արտահայտում այն մասին, որ դպրոցում դաստիարակչական աշխատանքի հաջողությունները զգալի չափով որոշում է աշակերտի անձի անհատական առանձնահատկությունների իմանալով և հաշվառումով, որ աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը, նրա հետ տարվող անհատական աշխատանքը մանկավարժական ներգործման լուրջ միջոց է, այդ գիտության մեթոդական հիմքը:

Հենվելով Հայաստանի առաջավոր մանկավարժների, ինչպես նաև մեր մանկավարժական հետազոտական աշխատանքի փորձի ընդհանրացման վրա՝ մենք եկանք այն եզրակացության, որ անհատական մոտեցումը պետք է թափանցի ուսուցչի ամբողջ ուսումնադաստիարակչական աշխատանքում առանձնապես դպրոցականների բարոյական դաստիարակության ծրագիրն իրականացնելիս:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բոլոր սովորողների կարիքները բավարարելու ամենաարդյունավետ ուղիներից մեկն ուսուցումը տարբերակելն է : Շատ ուսուցիչներ օգտագործում են տարբերակված ուսուցման ռազմավարություններ, քանի որ դա թույլ է տալիս նրանց ներգրավել իրենց աշակերտներին `յուրաքանչյուր աշակերտի յուրահատուկ ուսուցման ոճը հարմարեցնելով: Այնուամենայնիվ, երբ դուք ունեք մեծ թվով ուսանողներ, դա կարող է լինել կոշտ, յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների համար: Ժամանակ է հարկավոր, որ տարբերակված գործողություններ լինեն:[5]

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

[5] Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 3-е изд., испр. и доп. - М.: Изд-во УРАО, 2000

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:[6]

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման:

Ամենատարածված ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է: Օրինակ՝

1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը:

2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:

[6] Է. Հ. Վարդանյան «Անհատական մոտեցումը, որպես անհատի ձևավորման կարևորագույն հոգեբանամանկավարժական պայման», 2005

3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

Տարբերակված առաջադրանքները պետք է տալ տարբեր ձևերով.

- ✓ Ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար:
- ✓ Աշակերտն ինքն է ընտրում իր առաջադրանքը:

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը և խորհուրդներ տալ, թե ո՞ր առաջադրանքն ընտրի: 2-րդ դեպքում ուսուցիչը կարող է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին: 3-րդ դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրում:Կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգավորումներով առաջադրանքներ. գծագրեր, նկարներ: Աշակերտն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել դրանց օգնությանը, կարող է չդիմել:[7]

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է յուրացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները:

[7] Загвязинский В. И. Теория обучения: Современная интерпретация: Учебное пособие для вузов. 3-е изд., испр. — М.: Академия, 2006

Տարբերակված ուսուցման ներդրման ժամանակ բացահայտել են, որ շատ աշակերտներ, որոնք այս կամ այն առարկայից ունեցել են խոր ընդունակություններ, չեն ցանկացել ընտրել առավելագույն մակարդակը: Այդպիսի պատկեր է նկատվել նաև մնացած առարկաների նկատմամբ: Նշանակում է, որ երբեմն աշակերտը մի առարկայից ընտրում է նվազագույն մակարդակը, նպատակ չի հետապնդում, որպեսզի մյուս առարկայից ընտրի առավելագույնը: Այդպիսի աշակերտի հետաքրքրությունները այլ են. սիրում է զբաղվել սպորտով, արվեստով, շփվել ընկերների հետ:

Աշակերտների մեջ ստեղծված մրցակցությունը հիմնականում առաջ է մղում աշակերտներին, արդյունքում բարձրանում է ուսուման նկատմամբ հետաքրքրությունը:

Տարբերակված ուսուցում կազմակերպելիս ուսուցիչը պետք է ունենա հաստակ նպատակադրումներ: Ուսումնական որոշակի նյութի ուսումնասիրությունից և ուսումնասիրության արդյունքները չափելուց հետո դասարանը ,,բաժանվում է,, խմբերի.

1 խումբ--ուսումնական նյութը յուրացրած աշակերտներ, որոնց հետ անհրաժեշտ է տանել աշխատանքներ գիտելիքների ընդլայնման և խորացման ուղղությամբ:

2 խումբ—աշակերտներ, որոնք լավ չեն յուրացրել ուսումնական նյութը և ունեն բացթողումներ: Նրանց հետ տարվում են համապատասխան աշխատանքներ:

3 խումբ—աշակերտներ, որոնք ունեն խնդիրներ ուսումնական նյութի յուրացման հարցում: Նրանց համար մշակվում են համապատասխան առաջադրանքներ:

2-րդ խմբի աշակերտների համար որպես խորհրդատու և ուսուցչի օգնական կարող են լինել 1-ին խմբի աշակերտները, իսկ 3-րդ խմբի աշակերտների համար՝ 1-ին և 2-րդ խմբի աշակերտները:[8]

[8] Է. Հ. Վարդանյան «Անհատական մոտեցումը, որպես անհատի ձևավորման կարևորագույն հոգեբանամանկավարժական պայման», 2005

Կարծում եմ, որ հետևելով այս նպատակադրումներին, աշակերտական խմբերում անպայման դրական տեղաշարժ կունենանք:

Ուսուցիչը հաջողության կհասնի միայն այն դեպքում , երբ անցկացրած դասը հետաքրքիր ու բովանդակալից կլինի դասարանի բոլոր աշակերտների համար:

Այս մեթոդը թույլ չի տալիս աշակերտին զգալ թույլ ուժեղ աշակերտների մեջ: Բոլորը հավասար են այստեղ, բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասը բովանդակությունը:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս առումով ուսուցման նոր մեթոդների և կազմակերպման ձևերի իմացությունը շատ կարևոր է: Առաջարկում եմ քննարկենք տարբերակված և անհատական ուսուցման կազմակերպման ձևերը, որոնց շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ ուսումնական նյութը կարող է յուրացնել համապատասխան իր ընդունակությունների և ուսումնական հնարավորությունների:

Այսօր օրվա պահանջն է յուրաքանչյուր աշակերտի մեջ տեսնել անհատականություն և բնականաբար օրվա հրամայականն է նաև անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրին:[9]

ան անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել երեխայի ստեղծագործական հնարավորությունները, հոգեբանական առանձնահատկությունները, մտավոր կարողությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, անհատականությունը: Տարբերակված մոտեցումը, բնականաբար, փոխում է նաև ուցուցչի գործառույթները: Ուսուցչի գլխավոր խնդիր է դառնում սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը ենթադրում է.

[9] Загвязинский В. И. Теория обучения: Современная интерпретация: Учебное пособие для вузов. 3-е изд., испр. — М.: Академия, 2006

1. հաղորդակցություն ժողովրդավարական, հարգալից ոճ,
2. բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային, անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը,
3. աջակցող, խրախուսող, բայրացկամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով,
4. գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում:

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում:

Ցանկացած մոտեցման պարագայում կիրառելի են տարբերակված դասավանդման ռազմավարություններ, որոնցում հաշվի են առնված անհատ սովորողի հետաքրքրությունները կամ ուժեղ կողմերը:

Որոշ ուսուցիչներ սխալմամբ այն միտքն են արտահայտում, թե սովորողների ,մի մասը դաստիարակության ընթացքում գավասանքի ու խրախուսանքի կարիք է զգում, իսկ մյուս մասը պատժի կարիք ունի: Սովորողների այսպիսի բաժանումը անընդունելի է: Ընդհանրապես պետք է գիտակցել, որ չկան այնպիսի սովորողներ, որոնք իրենց վարքագծում չունեն առանձին կայուն դրական որակներ ու հատկություններ: Հետևապես, «վատ» աշակերտին պատժելու միտքը զարգացնելու փոխարեն, պետք է աշծատել տեսնել երեխայի մեջ լավը և վերջինիս օգնությամբ ստեղծել նորը՝ հնից հրաժարվելու նպատակով:[10]

Պատժի մեթոդը կիրառելիս նույպես պետք է անպայման գիտակցել, թե որքանով է այն համապատասխան սովորողի վարքին, նրա կատարած արարքի բնույթին ու բովանդակությանը, գիտակցված կամ ոչ գիտակցված ձևով կատարելուն և այլն: Պատժի օբյեկտիվությունը երբեմն կարելի է որոշել աշակերտական կոլեկտիվի տված բարոյական գնահատականով:

[10] Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 2004

Եզրակացություն

Փորձը ցույց է տալիս, որ պարտադիր չէ, որ պատժի իրականացումը անմիջապես հաջորդի սխալ արարքի կատարմանը: Երբեմն անհրաժեշտ է խուսափել անմիջապես պատժելուց, աշակերտին հնարավորություն տալով կատարածի համար զղջալու:

Դաստիարակության պրոցեսում անհատական մոտեցման խնդիրը անխզելիորեն կապվում է անձնավորության զարգացման և ձևավորման հարցի հետ: Անձնավորության զարգացումը, ինչպես գիտենք, դետերմինացվում է կյանքի պայմաններով և դաստիարակությամբ: Այդ զարգացման մեջ իրական դեր են խաղում նաև յուրաքանչյուր անձնավորության անհատական առանձնահատկությունները, հակումները, նրա նպատակասլացությունը, ընդունակություններն ու բնավորությունը:

Դսատիարակության մեջ անհատական մոտեցման սկզբունքը չպետք է դիտվի «զույգ մանկավարժության» տեսանկյունով, ըստ որի դաստիարակությունն ու ուսուցումը դիտվում են պրոցես, որ տեղի է ունենում միան «ուսուցիչ-աշակերտ» զույգերի միջև: Դպրոցականների նկատմամբ անհատական մոտեցումը դաստիարակության և ուսուցման պրոցեսում պետք է իրականանա կոլեկտիվում, կոլեկտիվի միջոցով և կոլեկտիվի համար:

Տարբերակված մոտեցումը նույնպես շատ կարևոր է աշակերտների ուսուցման գործընթացում, քանի որ շատ կարևոր է յուրաքանչյուր աշակերտի մեջ տեսնել տարբեր անհատականություն, ինչը շատ կարևոր է արդյունավետ ուսուցման համար:

Այսպիսով, կարող ենք եզրակացնե, որ ուսուցման գործընթացում շատ կարևոր են ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները: Այն պետք է կիրառել տարական, հիմնական և ավագ դպրոցներում: Երկու մոտեցումների կիրառման դեպքում ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կլինի և շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ուսուցիչ հասկանա, թե ամեն աշակերտի ինչպես պետք է մոտենալ, այսինքն՝ առաջին հերթին պետք է ճանաչել աշակերտի անհատականությունը և տեսնել յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Է. Հ. Վարդանյան «Անհատական մոտեցումը, որպես անհատի ձևավորման կարևորագույն հոգեբանամանկավարժական պայման», 2005
2. Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 2004
3. Загвязинский В. И. Теория обучения: Современная интерпретация: Учебное пособие для вузов. 3-е изд., испр. — М.: Академия, 2006
4. Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 3-е изд., испр. и доп. - М.: Изд-во УРАО, 2000
5. Михайличенко О.В. Методика преподавания общественных дисциплин в высшей школе: учебное пособие. – Сумы: СумДПУ, 2009